ԱԿԲԱ ԲԱՆԿԻ ԽՄԲԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվառման համար	Խմբագրության համար	Հաստատման ամսաթիվ	Ուժի մեջ մտնելու ամսաթիվ
CHARTER 02#6	2	18.12.2025թ.	29.12.2025թ.

Հեղինակ՝

Ստորաբաժանում	Պաշտոն	Անուն Ազգանուն
Իրավաբանական և համապատասխանության տնօրինություն	Կորպորատիվ քարտուղարության և կառավարման աջակցման բաժնի պետ	Տաթևիկ Իգիթյան

Նախահաստատող՝

Պաշտոն	Անուն Ազգանուն
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ, «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ Խորհրդին կից ռիսկերի կառավարման հանձնաժողովի նախագահ	Աշոտ Կարապետյան

Հաստատող՝

Պաշտոն	Անուն Ազգանուն
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ, «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ Խորհրդի նախագահ	Ռաֆայել Սարգսյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

1.1. ԱԿԲԱ ԲԱՆԿԻ ԽՄԲԻ խորհրդին կից ռիսկերի կառավարման հանձնաժողովի կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) նպատակն է սահմանել Խորհրդին կից ռիսկերի կառավարման հանձնաժողովի պատասխանատվության ոլորտները:

1.2. Կանոնադրությունը պետք է կիրառվի և պահպանվի բոլոր ղեկավարների, աշխատակիցների, ինչպես նաև բոլոր այն պայմանագրային գործընկերների և այլ անձանց կողմից, որոնք առնչվում են Խորհրդի կառավարման իրավասության ներքո գտնվող որևէ միավորի հետ:

2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

ԱԿԲԱ ԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ կամ Խումբ՝ ներառում է Հիմնական ընկերությունը և Դուստր ընկերությունը.

Հիմնական ընկերություն կամ Բանկ՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ՝ Խմբի կառավարման հիմնական մարմինը.

Դուստր ընկերություն կամ Լիզինգ՝ «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-Ն կամ ցանկացած ընկերություն, որը Հիմնական ընկերությունը ապագայում կարող է ձեռք բերել կամ հիմնադրել որպես դուստր ընկերություն՝ կիրառելի օրենսդրությամբ սահմանված կարգով.

Հիմնական ընկերության խորհուրդ՝ Հիմնական ընկերության կոլեգիալ կառավարման մարմինը, որը ՀՀ օրենսդրությամբ և Հիմնական ընկերության կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակում պատասխանատու է ռազմավարական վերահսկողության, գործադիր կառավարման վերահսկման և բաժնետերերի և այլ շահակիցների շահերի պաշտպանության համար.

Դուստր ընկերության խորհուրդ՝ Դուստր ընկերության կոլեգիալ կառավարման մարմինը, որը ՀՀ օրենսդրությամբ և Դուստր ընկերության կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակում պատասխանատու է ռազմավարական վերահսկողության, գործադիր կառավարման վերահսկման և բաժնետերերի և այլ շահակիցների շահերի պաշտպանության համար.

Խորհուրդ՝ Հիմնական ընկերության խորհուրդը և Դուստր ընկերության խորհուրդը.

Խորհրդին կից հանձնաժողով Հանձնաժողով՝ Հիմնական ընկերության խորհրդին և Դուստր ընկերության խորհրդին կից հանձնաժողովները, որոնց նպատակն է աջակցել Հիմնական ընկերության և Դուստր ընկերության խորհուրդներին իրենց պարտականությունների իրականացման գործում.

Կանոնադրության համատեքստում Խորհրդին կից հանձնաժողով(ներ)ը վերաբերում է Խորհրդին կից Ռազմավարության հանձնաժողովին.

Խմբի ներքին աուդիտի պատասխանատու՝ Հիմնական ընկերության Ներքին աուդիտի տնօրենը և Դուստր ընկերության վերստուգողը.

Գործադիր մարմին՝ Հիմնական ընկերության գլխավոր գործադիր տնօրենը և Դուստր ընկերության գլխավոր տնօրենը.

Հիմնական ընկերության գլխավոր գործադիր տնօրեն (ԳԳՏ) կամ Գլխավոր գործադիր տնօրեն՝ Հիմնական ընկերության միանձնյա գործադիր մարմինը, որը պատասխանատու է Հիմնական ընկերության գործադիր կառավարման և ամենօրյա գործունեության համար՝ գործող օրենսդրությամբ և Հիմնական ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով.

Դուստր ընկերության գլխավոր տնօրեն կամ Գլխավոր տնօրեն՝ Դուստր ընկերության միանձնյա գործադիր մարմինը, որը պատասխանատու է Դուստր ընկերության գործադիր կառավարման և ամենօրյա գործունեության համար՝ գործող օրենսդրությամբ և Դուստր ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով.

Խմբի ռիսկերի կառավարման պատասխանատու՝ Հիմնական ընկերության Ռիսկերի կառավարման տնօրենը.

Խմբի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և սանկցիաների պատասխանատու՝ Հիմնական ընկերության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և սանկցիաների տնօրենը և Դուստր ընկերության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և սանկցիաների պատասխանատու անձը.

Խմբի համապատասխանության գործառույթի պատասխանատու(ներ)՝ Հիմնական ընկերության Համապատասխանության բաժնի պետը և Իրավաբանական և համապատասխանության տնօրենը.

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված պարտականությունները տարածվում են Խմբի ընկերությունների Խորհրդին կից հանձնաժողովների վրա՝ այն չափով, որքանով դրանք վերաբերում են տվյալ ընկերության գործունեությանը:

3.2. Խորհրդին կից հանձնաժողով(ներ)ը գործում է Խորհրդի կանոնակարգի, ինչպես նաև Խորհրդի կողմից հաստատված Կանոնադրության համաձայն:

3.3. Խորհրդին կից հանձնաժողով(ներ)ի գործունեության ստանդարտները, կազմը և կառուցվածքը, նիստերը և քվորումը, ինչպես նաև Խորհրդին կից հանձնաժողով(ներ)ի նախագահների պարտականությունների շրջանակը սահմանվում են Խորհրդի կանոնակարգով:

3.4. Խորհրդին կից հանձնաժողով(ներ)ը կարող է քննարկել նաև այլ հարցեր, որոնք նախատեսված չեն Կանոնադրությամբ, եթե այդպիսի հանձնարարություն տրված է Խորհրդի կամ Գործադիր մարմնի կողմից: Գործադիր մարմնի կողմից այլ հարցեր քննարկելու հանձնարարության դեպքում Խորհրդին կից հանձնաժողով(ներ)ի նախագահը գնահատում է, թե արդյոք տվյալ հարցերը համատեղելի են Խորհրդին կից հանձնաժողով(ներ)ի գործունեության հետ:

3.5. Կանոնադրությամբ սահմանված լիազորությունների շրջանակում Խորհրդին կից հանձնաժողով(ներ)ի կողմից ընդունված/տրված ցանկացած որոշում կամ առաջարկություն պետք է արձանագրվի տվյալ մարմինների նիստերի ամփոփ արձանագրություններում:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

4.1. Հանձնաժողովը վերանայում է և Խորհրդին տրամադրում կարծիքներ, առաջարկություններ և խորհրդատվություն՝ ինչպես սահմանված է Կանոնադրության 4.2-րդ կետում

4.2. Հանձնաժողովի պատասխանատվության ոլորտը ներառում է.

*1) **Ռիսկի ախորժակ.***

ա. Խորհրդին տրամադրել խորհրդատվություն ռիսկի ախորժակին և ռիսկի ընդունելի մակարդակին առնչվող հարցերի վերաբերյալ.

բ. յուրաքանչյուր տարի դիտարկել Խմբի Ռիսկի ախորժակի համակարգը, և Խորհրդի հաստատմանը ներկայացնել Համակարգը կամ դրա ցանկացած առաջարկվող փոփոխություն.

գ. դիտարկել և յուրաքանչյուր տարի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ առավել հաճախ, Խորհրդի հաստատմանը ներկայացնել Խմբի Ռիսկի ախորժակի հայտարարությունը.

դ. ստանալ հաշվետվություններ և անհրաժեշտության դեպքում ստանալ արտաքին խորհրդատվություն՝ համոզվելու համար, որ Խմբի մոտեցումը իր ռիսկի ախորժակի սահմանմանը համապատասխանում է Կենտրոնական բանկի պահանջներին.

ե. համոզվել, որ ռիսկի ախորժակը արտացոլում է Խմբի ռազմավարության բոլոր ասպեկտները (ներառյալ՝ տեխնոլոգիաների ռազմավարությունը).

զ. դիտարկել Բանկի վերականգնման ծրագիրը Կենտրոնական բանկին ներկայացման ենթակա առնչվող փաստաթղթերը, և ներկայացնել Խորհրդի հաստատմանը, եթե գործող օրենսդրության համաձայն՝ նման հաստատումը պահանջվում է Խորհրդի կողմից՝ համոզված լինելով, որ այն ամբողջական է և համահունչ է Խմբի Ռիսկի ախորժակի համակարգի սկզբունքներին.

է. դիտարկել և Խորհրդի հաստատմանը ներկայացնել Կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթացը.

ը. դիտարկել և, անհրաժեշտության դեպքում, Խորհրդին տրամադրել խորհրդատվություն խոշոր գործարքների և/կամ Խմբի այլ խոշոր ծրագրերի վերաբերյալ՝ հատկապես ուշադրություն

դարձնելով Խմբի ռիսկի ախորժակի և ռիսկի հանդուրժողականության վրա հնարավոր ազդեցություններին:

թ. դիտարկել և Խորհրդին տրամադրել խորհրդատվություն Խմբի հաստատված ռազմավարության՝ տեխնոլոգիաներին վերաբերող դրույթների կատարման, կիբերանվտանգության և տեղեկատվական անվտանգության ոլորտում ծանր հանցագործության հետ կապված ռիսկերի վերաբերյալ.

ժ. դիտարկել և Խորհրդին և/կամ Խորհրդին կից Կառավարման, նշանակումների և վարձատրության հանձնաժողովին տրամադրել խորհրդատվություն վարձատրության, մի կողմից, և ռիսկերի ախորժակի ու վարվելակերպի, մյուս կողմից, համահունչ լինելու վերաբերյալ.

2) ***Ռիսկի շարունակական մոնիթորինգ.***

ա. հսկել և Խորհրդին տրամադրել խորհրդատվություն ռիսկերին առնչվող հարցերի վերաբերյալ (ներառյալ՝ Խորհրդին ներկայացվող բոլոր ռիսկային հարցերը), որոնց մեջ մտնում են ինչպես ֆինանսական ռիսկերը (ներառյալ՝ կապիտալի, իրացվելիության, վարկային և շուկայական ռիսկերը), այնպես էլ ոչ ֆինանսական ռիսկերը (գործառնական ռիսկերը, ներառյալ՝ տեղեկատվական անվտանգության և կիբերանվտանգության ռիսկերը և համբավի ռիսկերը).

բ. դիտարկել և մարտահրավերներ պարունակող հարցադրումներ ներկայացնել Խմբի ռիսկերի կառավարման և փողերի լվացման դեմ պայքարի հաշվետվությունների վերաբերյալ, որպեսզի.

1) Հանձնաժողովը կարողանա գնահատել Խմբի ռիսկի պրոֆիլը և այն, թե ինչպես է ղեկավարությունը հսկում, մշտադիտարկում և նվազեցնում Խմբի՝ ձեռնարկատիրական գործունեությունից առաջացող ռիսկերը,

2) հնարավոր լինի հստակ կենտրոնանալ ներկա և ակնկալվող ապագա ռիսկերի վրա, որպեսզի Հանձնաժողովը կարողանա գնահատել Խմբի խոցելիությունը և հնարավոր ռիսկերին դիմակայելու ունակությունը,

3) Հանձնաժողովը կարողանա Խորհրդին տրամադրել հավելյալ երաշխիքներ, որոնք Խորհուրդը կարող է պահանջել ռիսկերի մասին իրեն ներկայացված տեղեկատվության վերաբերյալ.

գ. իրականացնել ապագային միտված թեմատիկ ստուգումներ և մանրակրկիտ ուսումնասիրություններ, որպեսզի պատշաճ կերպով դիտարկվեն և որոշումներ ընդունվեն հիմնարար ռիսկերի և Կենտրոնական բանկի կարգավորումներին և պահանջներին համապատասխանելու առնչությամբ ծագող մտահոգությունների վերաբերյալ.

դ. դիտարկել էական ռիսկերի մասին ստացված ահազանգերը և վերահսկել ղեկավարության արձագանքներն ու այդ խնդիրների ուղղման ուղղությամբ վերջիններիս կողմից գործադրվող ջանքերը:

3) ***Սթրես-թեստավորում.***

ա. դիտարկել, մարտահրավերներ պարունակող հարցադրումների ենթարկել և, անհրաժեշտության դեպքում, հաստատել կամ եթե նման հաստատումը Խորհրդի իրավասության սահմաններում է՝ Խորհրդին հաստատմանը ներկայացնել սահմանված հիմնարար ենթադրությունները, խոցելիությունները և սցենարները, ինչպես նաև ընդլայնված չափումները, որոնք կկիրառվեն ինչպես ներքին, այնպես էլ Կենտրոնական բանկի պահանջով Խմբի մակարդակում իրականացվող սթրես-թեստերի շրջանակներում, և Կենտրոնական բանկին ներկայացվող փաստաթղթերը.

բ. դիտարկել և հաստատել կամ եթե նման հաստատումը Խորհրդի իրավասության սահմաններում է՝ Խորհրդին հաստատմանը ներկայացնել ինչպես ներքին, այնպես էլ Կենտրոնական բանկի պահանջով Խմբում իրականացվող սթրես-թեստերը, ներառյալ՝ Կենտրոնական բանկին ներկայացվող փաստաթղթերը.

գ. դիտարկել և համոզվել, որ Խմբի սթրես-թեստավորման կանոնակարգումը, կառավարումը և առնչվող ներքին հսկողության համակարգերը գործուն են.

4) ***Ռիսկերի կառավարման կանոնակարգում և ներքին հսկողության համակարգեր.***

ա. յուրաքանչյուր տարի դիտարկել Խմբի ռիսկերի կառավարման համակարգը.

բ. նախահաստատել ռիսկերի կառավարման համակարգի ցանկացած առաջարկվող փոփոխություն, որը գտնվում է Խորհրդի իրավասության սահմաններում:

գ. դիտարկել և վերահսկել ղեկավարության ջանքերը՝ ամրապնդելու և մշտապես ապահովելու ռիսկերի կառավարման արդյունավետ մշակույթ և գործուն ներքին հսկողության միջավայր, որը նպաստում է Խմբի քաղաքականություններին և համապատասխանության պահանջներին համապատասխանությանը.

դ. դիտարկել Խմբի ներքին հսկողության համակարգերը (բացառությամբ՝ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ներքին հսկողությունը), և համոզվել, որ դրանք արդյունավետ են,

ե. զեկուցել Խորհրդին ռիսկերի կառավարման և ներքին հսկողության համակարգերի արդյունավետության վերաբերյալ, (բացառությամբ՝ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ներքին հսկողության),

*5) **Համապատասխանություն, ՓԼ/ԱՖ դեմ պայքար և միջազգային սանկցիաներ***

ա. դիտարկել Խմբի համապատասխանության, միջազգային սանկցիաների համապատասխանության և փողերի լվացման դեմ պայքարի, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի (ՓԼ/ԱՖ դեմ պայքարի) համակարգերը և դրանք կամ դրանցում առաջարկվող ցանկացած փոփոխություն ներկայացնել Խորհրդի հաստատմանը.

բ. դիտարկել և մարտահրավերներ պարունակող հարցադրումներ ներկայացնել համապատասխանության, միջազգային սանկցիաների և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հաշվետվությունների վերաբերյալ, որպեսզի՝

1) Հանձնաժողովը կարողանա գնահատել Խմբի համապատասխանության պրոֆիլը և այն, թե ինչպես են ղեկավարության կողմից վերահսկվում, մշտադիտարկվում և նվազեցվում համապատասխանության, միջազգային սանկցիաների և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռիսկերը,

2) հնարավոր լինի հստակ կենտրոնանալ ներկա և ակնկալվող ապագա համապատասխանության, միջազգային սանկցիաների և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռիսկերի վրա, որպեսզի Հանձնաժողովը կարողանա գնահատել Խմբի խոցելիությունը և հնարավոր ռիսկերին դիմակայելու ունակությունը,

3) Հանձնաժողովը կարողանա Խորհրդին տրամադրել հավելյալ երաշխիքներ, որոնք Խորհուրդը կարող է պահանջել համապատասխանության, միջազգային սանկցիաների և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հուսալիության մասին իրեն ներկայացված տեղեկատվության վերաբերյալ,

4) դիտարկել Խմբի վարքագծի համակարգի արդյունավետությունը, որը նախատեսված է հաճախորդների համար արդար արդյունքներ ապահովելու, ֆինանսական շուկաների կարգավորված և թափանցիկ գործունեությունը պահպանելու և Խմբին անբարենպաստ ֆինանսական և ոչ ֆինանսական հետևանքներից (ներառյալ՝ համբավի վնասը) պաշտպանելու համար,

5) Հանձնաժողովը կարողանա գնահատել Խմբի վերահսկողության և ընթացակարգերի համակարգը, որը նախատեսված է այն ոլորտները բացահայտելու համար, որտեղ Խումբը կարող է ենթարկվել ֆինանսական հանցագործության կամ համակարգային չարաշահման:

գ. դիտարկել և վերահսկել ղեկավարության ջանքերը՝ ամուր համապատասխանության մշակույթ ներդնելու և պահպանելու համար, այդ թվում՝ համապատասխանության, սանկցիաների և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պարտավորությունների վերաբերյալ ուսուցման և իրազեկման ծրագրերի միջոցով:

դ. դիտարկել համապատասխանության խախտումների, սանկցիաների ոտնահարումների կամ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջադեպերի վերաբերյալ էական ահազանգերը և վերահսկել ղեկավարության արձագանքներն ու այդ խախտումների ուղղման ուղղությամբ վերջիններիս կողմից գործադրվող ջանքերը:

*5[1]) **Կարգավորող մարմնի համապատասխանությունը.***

ա. դիտարկել կարգավորող մարմնի կողմից ստացված էական հաղորդակցությունները, ներառյալ նամակները, ծանուցումները և վերահսկողական վերանայման գործընթացների շրջանակներում տրված այլ փաստաթղթերը (ներառյալ SREP-ը).

բ. դիտարկել վերահսկողական վերանայման գործընթացների շրջանակներում Կենտրոնական բանկին ներկայացման ենթակա հիմնական նյութերը.

գ. համակարգել և վերահսկել վերահսկողական էական եզրակացությունները շտկելու ջանքերը:

6) ***Տարեկան հաշվետվություն.***

ա. դիտարկել և հավանության արժանացնել տարեկան հաշվետվություններում Հանձնաժողովի հաշվետվության բովանդակությունը.

բ. դիտարկել և հավանության արժանացնել ներքին հսկողության համակարգերին (բացառությամբ՝ ներքին ֆինանսական հսկողության համակարգերի) և դրանց կենսունակությանը վերաբերող հայտարարությունները, ներառյալ՝ Խմբի առջև ծառացած հիմնարար ռիսկերի գնահատականը, որոնք ներառված են Խորհրդին ներկայացման ենթակա տարեկան հաշվետվությունում.

7) ***Ռիսկերի կառավարման, համապատասխանության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և միջազգային սանկցիաների գործառույթները և դրանց պատասխանատու անձինք.***

ա. մշտադիտարկել Խմբի ռիսկերի կառավարման պատասխանատուի, Խմբի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և սանկցիաների պատասխանատուի, Խմբի համապատասխանության գործառույթի պատասխանատու(ներ)ի **(**իրենց համապատասխանության գործառույթների առումով) արդյունավետությունը և անկախությունը, ինչպես նաև դիտարկել ռիսկերի կառավարման, համապատասխանության, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և միջազգային սանկցիաների գործառույթների կազմը և արդյունավետությունը, ներառյալ այն, որ գործառույթներն ունենան բավարար դիրք, բիզնեսից անկախություն և բավարար ռեսուրսներ (որակավորումներ, փորձ և անձնակազմի վերապատրաստումներ).

բ. ապահովել, որ Խմբի ռիսկերի կառավարման պատասխանատուն.

1) մասնակցի ռիսկերի կառավարմանը և հսկողությանն ամբողջ ընկերության մակարդակում,

2) բավարար չափով համոզված լինի, որ բիզնես գծերում ռիսկերի «տիրապետողները» ծանոթ են Խմբի ռիսկի ախորժակին և գործում են դրան համապատասխան,

3) ունենա անմիջական հասանելիություն Հանձնաժողովի նախագահին,

4) բացի ներքին կառուցվածքի շրջանակներում Գլխավոր գործադիր տնօրենին հաշվետու լինելուց, հաշվետու լինի նաև Հանձնաժողովին,

5) լինի անկախ առանձին բիզնես ստորաբաժանումներից.

գ. ապահովել, որ Խմբի համապատասխանության գործառույթի պատասխանատուները.

1) մասնակցեն համապատասխանության ամբողջ ընկերության մակարդակում,

2) բավարար չափով համոզված լինեն, որ Խմբում համապատասխանության պատասխանատվությունները հստակ բաշխված են և պարզաբանված համապատասխան բիզնես ստորաբաժանումների կողմից,

3) ունենան անմիջական հասանելիություն Հանձնաժողովի նախագահին,

4) լինեն անկախ առանձին բիզնես ստորաբաժանումներից և ազատ՝ անհարկի ազդեցությունից.

գա. ապահովել, որ Համապատասխանության բաժնի պետը.

1) հնարավորություն ունենա հաշվետվություն ներկայացնելու Հանձնաժողովին, զուգահեռաբար՝ ներքին հաշվետվողականության գծով՝ Իրավաբանական և համապատասխանության տնօրենին,

2) կարողանա իրականացնել վերահսկողություն, ռիսկերի գնահատում և եզրակացությունների մասին հաշվետվություններ Իրավաբանական և համապատասխանության տնօրենի հսկողության ներքո գտնվող այլ ոլորտների վերաբերյալ.

դ. ապահովել, որ Խմբի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և սանկցիաների պատասխանատուն.

1) մասնակցի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և սանկցիաների համապատասխանության վերահսկողությանը ամբողջ ընկերության մակարդակում,

2) բավարար չափով համոզված լինի, որ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և սանկցիաների պատասխանատվությունները հստակ բաշխված են և պարզաբանված ամբողջ Խմբում,

3) ունենան անմիջական հասանելիություն Հանձնաժողովի նախագահին,

4) հաշվետու է Հանձնաժողովին, զուգահեռաբար՝ ներքին հաշվետվողականության գծով՝ Գլխավոր գործադիր տնօրենին,

5) լինի անկախ առանձին բիզնես ստորաբաժանումներից և գործի ազատ՝ անհարկի ազդեցությունների.

ե. պետք է Խորհրդին տրամադրի կարծիք Խմբի ռիսկերի կառավարման պատասխանատուի, Խմբի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և սանկցիաների պատասխանատուի, Խմբի համապատասխանության գործառույթի պատասխանատու(ներ)ի նշանակման և լիազորությունների դադարեցման վերաբերյալ.

զ. յուրաքանչյուր տարի վերանայել Խմբի ռիսկերի կառավարման պատասխանատուի, Խմբի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և սանկցիաների պատասխանատուի, Խմբի համապատասխանության գործառույթի պատասխանատու(ներ)ի կատարողականը և նրանց վարձատրության վերաբերյալ առաջարկներ ներկայացնել Խորհրդին կից Կառավարման, նշանակումների և վարձատրության հանձնաժողովին և/կամ Խորհրդին.

*8)**Ազդարարում.***

ա. վերահսկել Խմբի քաղաքականություններն ու ընթացակարգերը՝ ազդարարողների մտահոգությունները գրանցելու և դրանց արձագանքելու համար.

բ.վերահսկել Խմբի ընթացակարգերը՝ ազդարարողների գաղտնիությունը, պաշտպանվածությունը և վերջիններիս նկատմամբ արդարացի վերաբերմունքն ապահովելու համար.

գ. պարբերաբար վերանայել ազդարարման քաղաքականությունների և ընթացակարգերի կիրառումից բխող զեկույցները.

դ. բավարար չափով համոզվել, որ կան նման հարցերի համաչափ և անկախ քննության և հետագա գործողությունների համար նախատեսված միջոցառումներ.

ե. ամեն տարի վերանայել այն միջոցառումների աշխատանքն ու արդյունավետությունը, որոնց միջոցով աշխատակիցները կարող են գաղտնի կերպով մտահոգություններ հայտնել.

*9)**Ներքին աուդիտ.***

ա. դիտարկել ներքին աուդիտի հաշվետվությունները, որոնք առնչվում են Հանձնաժողովի նպատակներին և պատասխանատվության շրջանակին.

բ. պատասխանել Խորհրդին կից Աուդիտի հանձնաժողովի կողմից իրեն ներկայացված և ներքին աուդիտին վերաբերող այլ հարցերի.

գ. ապահովել, որ Խորհրդին կից Աուդիտի հանձնաժողովը լինի տեղեկացված Հանձնաժողովի այն աշխատանքների վերաբերյալ, որոնք առնչվում են ներքին աուդիտի հաշվետվություններին և մասնավորապես, ցանկացած թերության վերաբերյալ, որը ընկալվել է ներքին աուդիտի աշխատանքների շրջանակի կամ պատշաճության վերաբերյալ.

10) ***Արտաքին աուդիտորներ.*** դիտարկել և վերահսկել ցանկացած խնդրի լուծման հարցը, որը բարձրացվել է արտաքին աուդիտորի կողմից Խմբի տարեկան հաշվետվության և այլ հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ, և որն առնչվում է ռիսկերի կառավարմանը կամ ներքին հսկողության համակարգերին (բացառությամբ՝ ներքին ֆինանսական հսկողության համակարգերի).

*11)**Ֆինանսական խմբի հետ կապված պարտականություններ.***

ա. դիտարկել և Խորհրդի հաստատմանը ներկայացնել Ֆինանսական խմբի ներքին իրավական ակտերը և դրանց փոփոխությունները, որոնք մտնում են Խորհրդի իրավասության մեջ և կապված են ռիսկերի, համապատասխանության, միջազգային սանկցիաների կամ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հետ.

բ. Խորհրդին ներկայացնել Ֆինանսական խմբի մակարդակում համապատասխանության և ռիսկերի կառավարման համար պատասխանատուի նշանակումը և ազատումը.

գ. դիտարկել և վերահսկել Ֆինանսական խմբի մակարդակում ներքին վերահսկողության համակարգի արդյունավետությունը և Խորհրդի հաստատմանը ներկայացնել Խորհրդի իրավասության սահմաններում գտնվող ցանկացած փոփոխություն.

դ. պարբերական հաշվետվությունների միջոցով վերահսկել Ֆինանսական խմբի ռիսկերի և համապատասխանության պրոֆիլը.

ե. դիտարկել Ֆինանսական խմբի իրավական ակտերի խախտումները և վերահսկել ղեկավարության արձագանքներն ու այդ խախտումների ուղղման ուղղությամբ վերջիններիս կողմից գործադրվող ջանքերը.

12) ***Այլ պարտականություններ.***

ա. հաշվի առնել, թե արդյոք անհրաժեշտ է ստանալ ռիսկերի վերաբերյալ արտաքին խորհրդատվությունը, մասնավորապես Հանձնաժողովի և ռիսկերի կառավարման գործառույթի կողմից կատարված վերլուծությունը և գնահատականները փորձարկելու նպատակով: Այն դեպքում, երբ այդպիսի խորհրդատվությունն անհրաժեշտ է, Հանձնաժողովը Խորհրդի կողմից լիազորված է ստանալ այդպիսի արտաքին մասնագիտական խորհրդատվություն.

բ. կատարել այլ պարտականություններ, որոնք կարող են ժամանակ առ ժամանակ Խորհրդի կողմից իրեն հանձնարարվել:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Հանձնաժողովը կամ Հանձնաժողովի նախագահը.

1) պետք է տարեկան առնվազն մեկ անգամ հանդիպի Խմբի ներքին աուդիտի պատասխանատուի հետ,

2) պետք է տարեկան առնվազն երկու անգամ հանդիպի Խմբի ռիսկերի կառավարման պատասխանատուի, Խմբի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և սանկցիաների պատասխանատուի, Խմբի համապատասխանության գործառույթի պատասխանատու(ներ)ի հետ՝ առանց ղեկավարության ներկայության,

3) կարող է Խորհրդին Կից Աուդիտի հանձնաժողովի համաձայնությամբ պահանջել ներքին աուդիտներ, որոնք վերաբերում են Խմբի ռիսկերի կառավարմանը, համապատասխանությանը (ներառյալ՝ միջազգային սանկցիաների համապատասխանությունը) և փողերի լվացման դեմ պայքարի (ՓԼ) գործառույթներին՝ իրենց գործունեության համարժեքությունը, արդյունավետությունը և ամբողջականությունը գնահատելու համար:

5.2.Այն դեպքերում, երբ հարցը մտնում է մեկից ավելի Խորհրդի հանձնաժողովների իրավասության մեջ, Խորհրդի նախագահը որոշում է, թե արդյոք հարցը պետք է քննարկվի համատեղ նիստում, յուրաքանչյուր հանձնաժողովի կողմից առանձին, թե՞ միայն հանձնաժողովներից մեկի կողմից: